ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<<31>> օգոստոսի 2016թ. **N 79**

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԵՐՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ԳԵՏԻԿՎԱՆՔ-ԵՂԵԳՆԱՁՈՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐ>> ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԿԻԼՈՄԵՏՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ՋՐԱԳԾԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ <<ԳԵՏՆԱՏՈՒՆ>> ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի <<ՀՀ մարզերում պետական կառավարման մասին>> 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջով .

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ '

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վերնաշենի համայնքի տարածքում գտնվող <<Գետիկվանք-Եղեգնաձոր խմելու ջրատար>> անավարտ շինարարության երեք կիլոմետր երկարությամբ ջրագծի մետաղական խողովակաշարը <<Գետնատուն>> ՍՊԸ-ին

հանձնելու հարցի ուսումնասիրման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

- Մարատ Ներսիսյան՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,
- Աղվան Հարությունյան՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ,
- Սամվել Աղաջանյան՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ:

2. Խմբի աշխատանքներում ներգրավել Վերնաշենի համայնքի ղեկավար Միքայել Բաղդասարյանին և <<Գետնատուն >> ՍՊԸ-ի տնօրեն Աղասի Բաղդասարյանին (համաձայնությամբ):

3.Կատարված ուսումնասիրությունների արդյունքները արձանագրել և ներկայացնել ՀՀ Վայոց ձորի մարզպետին:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ